

ամէն բան կողողաւոնեցաւ՝ բայց ի ստոնց (կիւիւ կեցուց) պատկանող ինչքերէն:

Լուկուլլոս գերի բռնած էր մեծամեծներուն կանայքը. զանոնք աննախատ ի դիպահոյ գնեւ լով՝ անոնց ամուսիններուն սիրտը շահեցաւ:

Կոմագենէի (ասիկա Ատրիքի զատաւ մ'է որ Եփրատի և Տարսոսի քով կը գտնուի) Անտիոքոս Թագաւորի և ուրիշներու պատուիրակութիւնները՝ (Լուկուլլոս) բարեկամաբար ընդունեցաւ:

Ասոնցմէ իմանալով թէ Տիգրան և Միտրդատ պատուիրակութիւն մը դրկած են առ Արշակ, իր գաշնակիցներէն քանի մը հոգի դրկեց, սպառնալով՝ եթէ անոնց օգնէ, խոստումներ ընելով՝ եթէ իր կողմ անցնի:

Այս ժամանակ Արշակ որ դեռ Տիգրանայ դէմ քնն ունէր, իսկ Հռոմմայիցիներէն ոչ մէկ կաշկած, նուիրակներ դրկեց, բարեկամութիւն և դաշնակցութիւն կնքեց:

Բայց յետոյ՝ երբ Սիկիլիոս գինքը տեսնելու եկաւ՝ կասկածեցաւ թէ ռազմագիտութեամբ նրա շանաւոր այդ մարդը՝ եկած էր իր երկիրի և բանակը լրտեսելու, ոչ եթէ դաշնագրութեան համար որ արդէն կնքուած էր:

(Արշակ) անոնցմէ (Հռոմմայիցիներէն և Հայերէն, ոչ մէկուն օգնութիւն ըրաւ, և ոչ ալ մէկուն թշնամութիւն, այլ երկուքին մէջտեղը կեցաւ՝ և ինչպէս որ բնական ալ էր՝ ոչ մէկը ուզեց զորացնել, վասնզի կը մտածէր որ եթէ պատերազմը հաւասար ոյժերով մղուի՝ ինքը ամենամեծ ապահովութիւն պիտի գտնէ:

Այս տարուան մէջ Լուկուլլոս ասոնք գործեց՝ Հայաստանի մեծ մասը նուաճելով:

Կուռտոս Մարկիտոսի ժամանակ (— այս մարդը մինակ չընտրուեցաւ, բայց իմիակ հիւլապատոսութիւն ըրաւ, վասնզի իր իշխանակից Լուկիոս Մետելլոսը տարւոյն սկիզբը մեռաւ, նոյն պէս իր յաջորդը՝ իշխանութեան մէջ մտնելէ առաջ, իսկ անկից վերջ ոչ ոք ընտրուեցաւ: Այս տարւոյն մէջ՝ Լուկուլլոս՝ երբ արդէն ամառուան կէսն եղած էր՝ (գարնան պատերազմ ընելը անկարելի եղած էր ցուրտի պատճառով) նորէն սկսաւ պատերազմը, երկիրն մէկ մասը աւերեց՝ որպէսզի բարբարոսները պաշտպանութեան ստիպելով՝ կտուի հրապիւրէ. բայց որովհետեւ անոնք չարժեքեցաւ՝ Լուկուլլոս իրենց վրայ յարձակեցաւ:

Այս ժամանակ թշնամաց հեծելագունդը վրանասակար եղաւ հռոմմական հեծելագունդին, իսկ հետևակագործի հետ հակառակադիր չեկան բարբարոսները, և նոյն իսկ փախան՝ երբ Լուկուլլոս վաճառակիրներով հեծելագունդին օգնութեան հասաւ:

Բայց (Հայերը) շատ կորուստ չկրեցին, ընդհակառակն գիրենք հալածողներուն դէմ դէպ ի նոսր նետեր նետելով՝ անոնցմէ շատերը նոյն տեղ պայանեցին, շատերն ալ վիրաւորեցին:

Այս վէրքերը վտանգաւոր էին և դժուարաբուժելի, վասնզի Պարթեւաց (= Հայոց) նետերը կը վերջանային երկու երկաթեայ ծայրերով, այնպէս չինուած՝ որ իսկոյն կը մեղցնէին,

թէ՛ երբ նետը վերքին մէջ թողոյին և թէ՛ երբ զայն դուրս հանէին. վասնզի այս ծայրերէն փոքրագոյնը՝ առանց կտորելու չէր կրնար հաւկառակ կողմը դառնալ, ուստի մէջը կը թաքնուէր Հռոմմայիցի շատ զինուորներ վիրաւորուած էին, ուրիշները կը մեռնէին՝ կամ անդամներէն մին կը կորսնցնէին, միևնոյն ժամանակ՝ պաշարը սկսած էր հատնիլ:

Անկից մեկնեցաւ Լուկուլլոս և յարձակեցաւ Միտրիի վրայ:

ՊԱՏԱՍԻԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԵՂԱՍ ԸՆԴԴԻՄԱՐԱՆՈՒԹԵԱՆՑ

« ԵՐԳԵՑՈՂԱԿԱՆ ՏԱՌԻՑ »

առ Հ. Կ. Տ. Սահակեան

Փարպ. էջ 16 տող 6. Ս. Սահակի համար կը գրէ «եղեալ կատարելապէս հմուտ երգողական տաղիցն»: Դուք կ'ըսէք որ այլը հասկացքեր են այդով նորա, որով եզրակացուցել են որ Ս. Սահակ առաջին ստեղծողն կամ յարմարագրողն եղեր է հայրական եռալոյս իսկ Դուք այս ենթադրութիւնը անյարմար դատելով իր հետևողներով, հարկ տեսեր էք — խնդրական քառք սրբադրել:

«Եղեալ կատարելապէս հմուտ երգողական տաղիցն». Որով Ս. Սահակ, ըստ Փարպեցուն, տեղեակ էր Յունաց (եկեղեցական) երգերուն և բանաստեղծութեանց, Եւ կամ աւելի պարզ ըսած. Ս. Սահակ գիտէր երգել շարականներ և տաղեր. և այն ժամանակից մտեր է Հայաստանայց եկեղեցու մէջ տաղերը և մեղեդիները:

Սակայն թուի մեզ որ Փարպեցու միտքը դեռ լաւ լուսարանուած չէ: «Երգեցողական տաղը» թերեւ ոչ նորա և ոչ տաղ կը նշանակէ, Բանգի ըստ ձեր բանից, ինչպէս Հայրապետիս միայն ձայնաւոր գրեր ճանաչելուն անդէպ է փարպեցու շոյալած գովաստները, յիշելով ընդ նմին մարդկային մտաց բարձրագոյն առարկաները այսինքն հետադարձութիւն և փիլիսոփայութիւնը: Նոյնպէս ոչ է ի դէպ

կարծել որ Ս. Սահակ միայն տաղեր գիտէր գրել կամ երգել, և անոր համար բնիւ որ «որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յունաց» : Նոթմաներ և Տաղեր շատ յառաջ գոյու թիւն ունէին քան Ս. Սահակը, նաև Հայ յաստանի մէջ, քանի որ կար երաժշտութիւն, ուստի երգողի մատեր փոխելը թիւի վերայ, է նորոն կամ ըստ մեզ տաղ կամ խաղ, Ուստի Ս. Սահակ ըստ Ձեր տեսութեան նոր բան չէ հնարեր : Առ այս կը հրաւիրենք ուշ դարձնել դաղ կամ տաղ բառերու նշանակութեան վրայ. յորմէ դաղել կամ տաղել բայերը, որոց առաջինը չկայ բառարաններում : Տաղ կամ դաղ այն նշանը որ հիմայ անասունները նշնում են, խարելով կամ ականջը կամ քիթը կամ ազդրը : Տաղ դնէին նաև երգեցողական գործիքներու վրայ, իրրև ելան աշակերտին մատները փոխելու. այսպիսի նշանը ըստ մեր լեզուին ցարդ տաղ կոչուած, կը նոյնանայ լատիններէն Նորս բառի հետ, որ է Նյուս :

Ուրեմն յորում պէտք է փնտռել Ս. Սահակայ գերազանցութիւնն «քան զբազում գիտնովք Յունաց» : Յոյներն մայր և դայակ կոչուած են ամեն գիտութեանց, և Ս. Սահակի ժամանակն իսկ առաջնակարգ տեղ բռնած էին Աթէնք, Բիւզանդիոն, Աղեքսանդրիա, ուստի Ս. Սահակայ գիտութիւնը չէր կարող առաւելուլ քան զգիտնոց Յունաց, յորում էին նոքա վարպետք և ուսուցիչք այլ ազգաց. ուստի Ս. Սահակայ գիտութիւնն յայնմ առաւել պիտի լինէր քան զգիտութեան Յունաց, որ նա գիտեցաւ աւելի հմտութեամբ և հոգեւորական արուեստով և խելահասութեամբ կամ փիլիսոփայութեամբ զորոց գիտէն զգնի յորինել կարգել լեզուի կանոնները՝ ըստ քերականութեան յունական լեզուին :

Մինչդեռ Ս. Մեսրոպը կանխաւ գիմեր էր առ այլ Յոյն գիտնականները և ձեռնունայն դարձեր էր Ս. Սահակի մօտ :

Ի հնումն փիլիսոփայութիւնը կ'ամփոփէր իւր մէջ աստուածային և մարդկային գիտելիքները. որով փիլիսոփայու-


թեան ընթացքն աւարտողը էր միանգամայն լաւ հոետոր մը, լաւ քերական մը, լաւ քերթող մը (ոչ բանաստեղծ կամ երգող) այլ հմուտ քերթողական արուեստին կամ ըստ Փարպեցուն « Երգեցողական տառիցն » Art poétique : Ուստի Փարպեցու գովեստը Ս. Սահակի յառաջադէմ կատարելութեանց մասին «որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յունաց» յայնմ էր որ նա անսխալ և ողորակի առաջնորդէր կարգաւորելու քերականական կանոնները և լեզուի շարադասութիւնը ըստ քերթողական արուեստին, որ է բաժանել շեշտաւոր և անշեշտ անդամներու, և բաժանել վանկերը, տրոհել կրկին ձայնաւոր կամ բաղաձայն տառերը վանկերը ըստ անալոյսի առոգանութեան, որպէս գիւլլան ողորկ և սահուն լեզուի տակ « ըստ կարգման սխիւով բայիցն Յունաց » ըստ անալոյսի քերթութեան յունիին » : Այս մասին մի խոր ուսումնասիրութիւն պիտի հաստատէ մեր ըսածները : Բայց մենք հարեանցի կերպով ազատ զաղափար մը ևս տանք մեր յայտնած մտքերուն : Դիցուք Ս. Մեսրոպայ օրն ենք և պէտք է կարգաւ շեշտով և բաժանել վանկերը և տառերը հետեւեալ բառերու, Պայծառութիւն, Զխտակարան, Լուսաւորութիւն, Զուարթնոց և այլն և այլն : Անվարժ մէկն պիտի գրէր պայծառութիւնը՝ պայծառութիւն կամ պայծառութիւն. Ս. Սահակ պիտի ուղղէր. պայծառութիւն : Ab uno vel duo discedit omnes : Ուրեմն Ս. Սահակին արդիւնք է ըստ ձայնի բաժանել տառերը բաղաձայնները միշտ թողուլ յաջորդ ձայնաւորի վրայ, բայ ի կրկիններուց, և ըստ այսմ երգեցողական կամ շեշտաւոր տառից (որ բացարձակապէս ձայնաւորներ են) կանոնաւորելը յատուկ է քերթողական արուեստին, որը Փարպեցին կոչէր է « Երգեցողական տառիցն » հմտութիւն. « Յերիւրելով գնա Ս. Հայրապետին Հայոց Սահակայ, գիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգաւորութեան գրեկոյս և հեգենային ողորդաւորքան » : Էջ 15 տող. 5 :

«Փիլիսոփայական արուեստից ցուցա-
նիւր» լաւագոյն չէ՞ ընթեռնուլ արուես-
տին։ քանզի արուեստ փիլիսոփայութեան
մի է. և միովն կը բովանդակէր զամե-
նայն գիտութիւն մարդկային։

«Երգեցողական տառիցն»

Արդեօք «Երբայտիսն տառիցն»՞ յայսմ
կարող էր Ս. Սահակ գերագանցել քան
զբազում գիտնովք յունաց. վասն զի Եզ-
նելայ բերած հաստատուն օրինակ Ս.
Գրոց, զուցէ նշանակէ երբայական բնա-
զիրը. որով մեր թարգմանութեան տար-
բերութիւնները յոյն բնագրից կամ Եօթա-
նասնից կոչուածն, այսու կարելի է բա-
ցարել։ Եթէ ինչպէս ոմանը համարին թէ
Եզնելայ բերածն Որոգինի վեցիջեանն էր,
չի հակասեր մեր ըսածին, զի Որոգինի
բոլոր արդիւնքն էր Երբայական բնագրի
հարազատ ընթերցումը տալ և ընդ նմին
հարազատ թարգմանութիւնն։ Ս. Սահա-
կին հաւասար երբայագէտ Յունաց մէջ
չգտնուիլ, անկարելի բան մը չէ։

Ն. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ



ԿԱՐԾԻՔ ԵՒ ԿԵՂԾԻՔ

Հայր Անդրիկեան, որ այս երկու ձա-
յները միեւնոյն բառին պարզապէս երկու
ձեւերը կը համարի, իր փաստերը աւելի
մանրամասնօրէն յառաջ բերելով այս ան-
գամ (Ֆազմ. Սեպտ.), շնորհք կ'ընէ զիս
հրաւիրել, իրրե վէճին սկսողը, վերջին
բառ մը ըսելու։ Ես ալ իմ փաստերը
կրկնելու և բացատրելու այս առիթով
ստիպուած եմ քիչ մը աւելի մանրամաս-
նութեանց մէջ մտնել։

Երկու բառերու ձայներուն լծորդութիւ-
նը ինքնին բաւական ապացոյց չէ անոնց
նոյնութեանը։ Այս (ասիկա) և այս (չար
ոգի) բոլորովին նոյն են հնչումով, ինչ-
պէս այր (քարայր) և այր (մարդ), սա-
կայն ոչ ոք կը կարծէ թէ անոնք միև-

նոյն բառը ըլլան։ Յայտնի է թէ անոնց
ձայնի նոյնութիւնը դիպուածական է։ Նը-
մանապէս դիպուածական նմանութիւն ու-
նեցող շատ բառեր կան զորս լեզուաբանը
կը զգուշանան միեւնոյն բառի երկու տար-
բեր նշանկերպումներն նկատելէ։ Այս կար-
գէն են, ըստ իս, կարծիք և կեղծիք։

Կարծիքը անկատար գիտութիւն է, բո-
լորովին ստույգ չեղող համոզում մը որ
հաւանականութեան փաստերու կը յենու,
և բնաւ կապ չունի կեղծելու հետ։ Պ.
կը կարծէ թէ հիւանդ է ինքը թէ կը կեղ-
ծէ։ Այսպիսի խօսքերու մէջ երկու բառե-
րը կը հակադրուին իրրե հակասիւղ։ Եթէ
կեղծիք է, ալ կարծիք չի կրնար ըլլալ
անոր մօլիւն մէջ։ Կարծիքի մը բնութեանն
է անկեղծ ըլլալ։ «Չեք անկեղծ կարծիքն
է սսիկա» կրնանք հարցնել. սակայն ար-
տառոց պիտի ըլլար հարցնել. «ձեր ան-
կարծիք կարծիքն է այս»։ Երկու բառե-
րուն իմաստները, ամենուս ալ հասկացու-
ղութեամբն ու տիեզերական գործածու
թեամբ, իրարու հակառակ են։ Ուրեմն ա-
նոնք միեւնոյն բառի երկու տարբեր ձա-
յներ չեն։

Պ. Զօրպանեան վայրապար փորձած է
իմաստներու այս հակառակութիւնը մեկ-
նել՝ ըսելով թէ երկու բառերը «ժամա-
նակի ընթացքին իրարմէ տարբեր ուղղու-
թիւն բռնելով... բուն իմաստներն կորսն-
ցուցած են և իրենց յատուկ զատ զատ
նշանակութիւն ունեցած են»։ Ի հաստա-
տութիւն ի մէջ կը բերէ իմ յիշած մէկ
օրինակս, post բառը, որ ձողի նշանա-
կութեանն բարձրացած է մինչև թղթա-
տարութեան իմաստը։ Սակայն քաջ ի մտի
ունենալ պէտք է սա հիմնական սկզբունքը
թէ բառի մը նշանակութիւնը պարզն
կենդոտին, պատիկէն մեծին, թանձրա-
ցեալէն վերացեալին կ'երթայ իր զար-
գացման ընթացքին մէջ, բայց ոչ երբէք
իր նախնական իմաստին հակառակ ու
անհամաձայն նշանակութեան մը։ Այսպէս
postը թղթատարութիւն եղած է, éti-
quette, թղթի կտորը, եկած է վերջա-
պէս նշանակել քաղաքավար ընկերութեան